# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀՀ-ՀՄԱԾՁԲ-22/17-1

ք. Երևան «05» դեկտեմբերի 2022թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը ի դեմս գործադիր տնօրեն՝ Հովհաննես Մովսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «Արէներգո» ՍՊԸ-ի, ի դեմս տնօրեն Տիգրան Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին :

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հեռուստատեսային տեխնիկայի վարձակալության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.5 Սույն պայմանագրի 3.1 կետում նշված հանձնման-ընդունման արձանագրության հաստատման օր է համարվում Պատվիրատուի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու օրը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 8 390 000 (ութ միլիոն երեք հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ բոլոր կիրառելի հարկերը:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցաժ ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին: Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն Պայմանագրով սահմանված պայմանները կիրառելի են Կողմերի միջև մինչև Պայմանագրի ստորագրումը առաջացած հարաբերությունների նկատմամբ, մասնավորապես, **2022 թվականի դեկտեմբերի 1-ից** առաջացած հարաբերությունների նկատմամբ (Մանկական Եվրատեսիլ 2022 մրցույթի շրջանակներում):

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ** | **«Արէներգո» ՍՊԸ** |

Հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0011
ՀՎՀՀ՝ 01540062
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք 8 զնգվ. 36, բն. 71
Բանկ՝ АКБА-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 220463330401000
ՀՎՀՀ՝ 00890843

*Հավելված N 1*
*« 05 » դեկտեմբերի 2022թ. կնքված*
*ՀՀՀ-ՀՄԱԾՁԲ-22/17-1 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախ. միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանում | Տեխնիկական բնութագիր | Չ/Մ | Ընդհանուր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր քանակ | մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | Հասցե | Ժամկետներ |
| 1. | 92151100/50 | ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ | Վարձակալվող տեխնիկայի ցանկը ստորև<br><br>Ապրանքի հանձնման ժամկետը՝ 1 օրվա ընթացքում: | դրամ | 8 390 000 | 1 | Ք. Երևան Գ. Հովսեփյան 26 | 01.12.2022-11.12.2022 |

**Պարտադիր պայման՝**

- Վարձակալության գումարի մեջ ներառվում են տեխնիկական միջոցների մատակարարման, տեղափոխման, տեղադրման (ներառյալ կոմուտացիան) և սպասարկման ծախսերը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ**

Հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0011
ՀՎՀՀ՝ 01540062
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001

**ԿԱՏԱՐՈՂ**
**«Արէներգո» ՍՊԸ**

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք 8 զնգվ. 36, բն. 71
Բանկ՝ ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 220463330401000
ՀՎՀՀ՝ 00890843

| Հ/Հ | Անվանու մը | Տեխնիկական բնու թագիրը | Չափման միավորը | քանակը |
|---|---|---|---|---|
| 1 | Blackmagic Design Smart Videohub 20 x 20 6G-SDI / կամ համարժեք | Մու տքեր , ել քեր 20x 6G-SDI inputs / 20x 6G-SDI outputs<br>Ավտոմատճանաչ ու մ - Auto-detects between SD, HD, Ultra HD 4K, and DCI 4K and instantly switches standards<br>Built-in SDI reclocking on every SDI input<br>Supports 8-bit, 10-bit, and 12-bit 4:2:2 and 4:4:4 signals<br>կոդավորման ստանդարտներ 4:2:2 or 4:4:4 color sampling with 10-bit processing<br>UHD 4K (3840 x 2160) up to 30p<br>Supports DCI 4K (4096 x 2160) at 24p<br>HD Video Resolutions up to 1080p60<br>Ձայ նի թողու նակու թյ ու ն - Supports 16 channels of embedded audio on each SDI signal<br>Genlock<br>Reference input compatible with black burst and tri-sync<br>Built-in video monitoring and spin knob control<br>Push buttons on front panel<br><br>Videohub control over Ethernet պետք է ու նենաEthernet controlհամակարգչ այ ին ցանցով կառավարման հնարավորու թյ ու ն, պետք է աջխատի Videohub Smart Control and Videohub Master Control panels ների հետ | հատ | 1 |
| | Lynx Technik AG Dual-Channel 3Gbit SDI to Fiber Transmitter with SFP module /AJA FiDO Dual-Channel 3G-SDI to LC Fiber Mini Converter with SFP module | Մու տքեր , ել քեր - Dual SDI Input / Dual LC Fiber Output<br>Մինչ և -1080p ձևաչ ափ<br>Equalized and Reclocked Inputs<br>ASI Compatible<br>Պետք է համատեղել ի լ ինի SMPTE Specifications ստանդարդներին<br>Սնու ցման համակարգ- Locking Power Connector, Worldwide Power Supply<br>Formats 3 Gbps, 1.5 Gbps, 270 Mbps (automatically selected based on input)<br>Input 2 x 3G/HD/SD-SDI on BNC<br>Output 2 x LC optical fiber<br>Supported Resolution Up to 1920 x 1080p, պետք է ու նենաSFP մոդու լ ով | հատ | 6 |
| | Blackmagic Design Mini Converter Optical Fiber to SDI with Power Supply and sfp, SDI HD/3Gb/s կամ բարձր արագու թյ ամբ | Մու տքեր , ել քեր - 1x SDI Input / 1x LC Fiber Output , 1x SDI Output / 1x LC Fiber Input<br>Մինչ և -1080p ձևաչ ափ<br>Equalized and Reclocked Inputs<br>ASI Compatible<br>Պետք է համատեղել ի լ ինի SMPTE Specifications ստանդարդներին<br>Սնու ցման համակարգ- Locking Power Connector, Worldwide Power Supply<br>Formats 3 Gbps, 1.5 Gbps, 270 Mbps (automatically selected based on input)<br>Input 2 x 3G/HD/SD-SDI on BNC | հատ | 16 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Supported Resolution Up to 1920 x 1080p, պետք է ու նենաSFP մոդու լ ով | | |
| | Lynx Technik AG yellobrik ORR 1802 Dual Channel 3Gbit fiber to SDI Receiver/**AJA FiDO Dual-Channel LC Fiber to 3G-SDI Mini Converter** | Մու տքեր , ել քեր Dual LC Fiber Input / Dual SDI Output<br>Մինչ և -1080p ձևաչ ափի<br>Equalized and Reclocked Inputs<br>ASI Compatible, Formats 3 Gbps, 1.5 Gbps, 270 Mbps (automatically selected based on input)<br>Input 2 x LC optical fiber<br>Output 2 x 3G/HD/SD-SDI on BNC<br>Պետք է համատեղել ի լ ինի SMPTE Specifications ստանդարդներին<br>Սնու ցման համակարգ- Locking Power Connector, Worldwide Power Supply | հատ | 6 |
| 2 | DECIMATOR MD-LX HDMI/SDI Bidirectional Converter | Մու տքեր , ել քեր SDI Input and Equalized Loop Output HDMI 1.2 Output, Input 1x HD/SD-SDI (SMPTE 259/292/296)<br><br>տեսագրանշանի ֆորմատներ: 720p 50/59.94/60,1080i 50/59.94/60,1080p23.98,1080p24, 1080p25, 1080p29.97 ,1080p30<br>Outputs 1x HDMI 1.2, supports 8-channel embedded audio (HDCP content not supported)<br>1x 2-channel L/R audio on RCA<br>1x equalized HD/SD-SDI loop-output<br>Ձայ անայ ին թողու նակու թյ ու ն 8-Channel Embedded Audio Supported<br>2-Channel RCA for Separate Audio<br>Սնու ցման համակարգ - Universal Power Supply Included | հատ | 14 |
| | Blackmagic Design Micro Converter SDI to HDMI 3G (with Power Supply) | Մու տքեր , ել քեր , 1x SD/HD/3G-SDI մու տք և 1 x հատ ել ք<br>1 x HDMI Type A DCI 2K SDI Մու տք/ել ք\| 1080p60 HDMI ել ք<br>AC Power Supply & Socket Adapters<br>3D LUT չ ափորոշման կամ հանգու յ ցի ել քի համար<br>SDI A/B ընտրու թյ ու ն \| USB հզորու թյ ու ն<br>Ներկառու ցված սու դիո | հատ | 16 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Blackmagic Design SDI to HDMI 6G Mini Converter with power supply | Մու տքեր , ել քեր , 2 հատ4K SDI մու տքեր<br>1 HDMI տեսակի A ել ք և 1 SDI ել ք<br>պետք է աշխատի հետևյ ալ ստանդարտներովSD, HD, UHD 4K և DCI 4K ազդանշանների հետ<br>Ավտոմատմու տքայ ին ազդանշանի հայ տնաբերու մ<br>24 բիթ, 48 կՀց աու դիո<br>AES-EBU անալ ոգայ ին և թվայ ին աու դիո ել քեր<br>Ձայ նի ներկառու ցու մ SDI-ից<br>Կարգավորու մներ մինի անջատիչ ների կամ ծրագրաշարի միջոցով<br>USB 2.0 պորտ որոնվածը թարմացնել ու համար<br>Ներառված է ու նիվերսալ 12 Վ սնու ցման աղբյ ու ր | հատ | 10 |
| | DECIMATOR MD-HX Miniature HDMI/SDI Cross Converter with Scaling & Frame Rate Conversion | Մու տքեր , ել քեր HDMI & 3G-SDI Input<br>փոխակերպիչ հետևյ ալ հնարավորու թյ ու ններով Converts HDMI to SDI & SDI to HDMI<br>Upscales/Downscales, Converts Frame Rate<br>HDMI, 2 x SDI Loop Through & 2 x SDI Out, Inputs HDMI: 1 x Type A<br>SD/HD.3G-SDI: 1 x BNC Outputs HDMI: 1 x Type A<br>SD/HD.3G-SDI: 4 x BNC<br>SDI Formats Supported 3G: SMPTE 424M 2.97 and 2.967 Gb/s<br>1080p: 60/59.94/50Hz<br>HD: SMPTE 292M/274M/296M 1.485 and 1.435 Gb/s<br>1080i: 60/59.94/50 Hz<br>1080p/psf: 30/29.97/25/24/23.98 Hz<br>720p: 60/59.94/50/30/29.97/25/24/23.98 Hz<br>Control Buttons<br>SDI output source from HDMI IN, SDI IN, Scaler<br>SDI output 1 is loop<br>HDMI output type and source from HDMI IN, SDI IN, Scaler<br>Scaler source, reference, format and Aspect Controls<br>Audio pair routing for HDMI and SDI output<br>LCD backlight off time<br>Back to Status time<br>14 Different Conversion Modes<br>LCD Info Screen with Button Controls<br>սնու ցման համակարգ Threaded Locking Power Connector | հատ | 2 |
| | Blackmagic Design Mini Converter SDI Distribution | Մու տք (1) SDI , (8) SDI ել քեր<br>3G/HD/SD-SDI մու տք՝ ավտոմատանջատու մով<br>Reclocked պորդ ու նքները<br>Օժանդակ տվյ ալ ներ և ներկառու ցված աու դիո<br>1080p և 2K բաժխու մ<br>Աջակցու մ է ASI ազդանշաններին | հատ | 11 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Blackmagic Design SDI to Audio Mini Converter /AJA D10CEA SDI to Analog Audio/Video | Ներկառուցված աուդիո մինչև 1080p SDI ազդանշանների մեջ<br>Չորս 1/4 դյույմանոց աուդիո մուտքագրման խցիկներ<br>Աջակցում է անալոգային աուդիոյի 4 ալիք<br>Աջակցում է AES/EBU աուդիոյի 8 ալիք<br>Ավել որդ SDI Backup մուտքագրումՍուդիո մուտքի 4 1/4 դյույմ վարդակներ աջակցում են հավասարակշռված անալոգային 4 ալիք կամ AES/EBU հավասարակշռված թվային աուդիո 8 ալիք:<br>SDI ելք 1 x SDI BNC-ի վրա(փոխարկել ի 3G/HD/SD-ի միջև)<br>ԱվտոմատSDI անջատում Ավտ հայտնաբերում 3G/2K/HD/SD-SDI<br>Թարմացումներ և կարգավորում Բարձր արագության USB 2.0 պորտի միջոցով (480 Մբիթ/վրկ)<br>SDI համատեղելի SMPTE 292M/259M/296M/372M/424M-B/425M ITU-R BT.656/BT.601<br>SDI մեսագրման գծերը SDI վիդեո միացումները կարող են փոխարկվել HD-ի և SD-ի միջև SDI 4:2:2, 4:4:4 վիդեո նմուշառում<br>SDI Audio Sampling TV ստանդարտնմուշառման արագություն 48 կՀց և 24 բիթ<br>Գույնի ճշգրտություն SDI 4:2:2, 4:4:4<br>Գունավոր տարածություն SDI YUV, RGB<br>SDI ավտոմատմիացում Ավտ 3G/HD/SD ընտրություն<br>SDI 1080p ձևաչափի աջակցություն՝<br>60/59.94/50/30/29.97/25/24/23.98<br>1080PsF` 30/29.97/25/24/23.98<br>1080i` 60/59.94/50<br>720p` 60/59.94/50<br>525i` NTSC 59.94<br>625i` 50 պպ .<br>Աջակցում է 2K 2K DCI 25p/24p/23.98p ձևաչափին 2K DCI 25PsF/24PsF/23.98PsF<br>Ծրագրային ապահովման կառավարում Mac OS X և Windows ծրագրային ապահովման թարմացումները USB-ի միջոցով<br>Ներքին ծրագրաքարի թարմացում տրամադրված թարմացման հավելվածի միջոցով<br>Օպերացիոն համակարգ Mac OS X 10.11 El Capitan, macOS Sierra կամ ավելի ուշ<br>Windows 8.1 կամ Windows 10<br>Կարգավորումներ Control Mini անջատիչներ կամ ծրագրային ապահովման USB<br>Էներգամատակարարում Ունիվերսալ +12 Վ սնուցման աղբյուր՝ բոլոր երկրների համար միջազգային վարդակից ադապտերներով և մալուխի կրիչով | հատ | 2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Blackmagic Design Audio to SDI Mini Converter | Ներկառուցված աուդիո SDI ազդանշանների մեջ մինչև 1080p<br>Չորս 1/4 դյույմանոց աուդիո մուտքեր<br>Պետք է ունենա անալոգային աուդիո 4 ալիք<br>Պետք է ունենա AES/EBU աուդիո 8 ալիք<br>Պահեստային SDI մուտքագրում, Աուդիո մուտքի 4 x 1/4 դյույմ վարդակներ ունեն հավասարակշռված անալոգային 4 ալիք կամ հավասարակշռված AES/EBU թվային աուդիո 8 ալիք<br>SDI ելք 1 x SDI BNC-ի վրա(փոխարկել ի 3G/HD/SD-ի միջև)<br>SDI Auto Switching 3G/2K/HD/SD-SDI-ի ավտոմատ հայտնաբերում | հատ | 2 |
| 3 | Blackmagic Design Video Assist 7" 12G-SDI/HDMI HDR Recording Monitor | 7 դյույմ LCD սենսորային էկրան 1920 x 1200 լուծաչափով<br>Տեսագրում մինչև DCI կամ UHD 4K HDR<br>HDMI և 12G-SDI վիդեո մուտքեր և ելքեր<br>10-բիթանոց ProRes 4:2:2 և DNxHD կոդավորում<br>Blackmagic Raw որոշ տեսախցիկներով<br>3D LUT, պայծառությունը 2500 $cd/m^2$<br>Պահպանում երկու SDHC/XC հիշողության սլոտներում<br>Երկու հավասարակշռված Mini-XLR աուդիո մուտքեր<br>Հիստոգրամ, օսցիլոգրամ, վեկտորսկոպ<br>L- շարքի մարտկոցի երկու բնիկ, AC ադապտեր | հատ | 2 |
| | Blackmagic Design HyperDeck Studio HD Pro | 1 RU ֆայլի DVR<br>Չսեղմված և H.264 10-bit 4:2:2 տեսանյութ<br>Ձայնագրությունները սեղմված ProRes/DNxHD-ով<br>2 x 2,5 դյույմ ,SSD և 2 x SD քարտի բնիկներ<br>1-ը 6G-SDI-ում, 2-ը 6G-SDI-ում<br>1 HDMI մուտք, 1 HDMI ելք<br>1 SDI Loop ելք, 1 USB Type-C ելք<br>Բարձրախոս, հեռակառավարման վահանակ, 1G Ethernet պորտ<br>Առջևի վահանակի կոճակներ, անիվ, LCD էկրան | հատ | 1 |
| 4 | Yamaha HS5 Powered Studio Monitor (Single, Black)/**Adam audio T5V** | 70 Վտ ընդհանուր հզորություն<br>5" Կոն Վուֆեր<br>1" Dome Tweeter<br>Սենյակի կառավարման արձագանքման անջատիչ<br>Բարձր հարդարում<br>1x XLR մուտք<br>1x 1/4" TRS մուտք<br>Ցածր ռեզոնանսային պարիսպ Մոնիտորի տեսակը Ակտիվ 2-ուղի<br>Բաս-ռեֆլեքս տիպային բնակարան<br>Գնահատված հզորությունը 70 Վտ<br>Դիմադրություն 4 օհմ<br>LF վարորդներ՝ 1 x 5" / 12,7 սմ կոն<br>HF վարորդ՝ 1 x 1" / 2,54 սմ գմբեթ<br>Ուժեղացում 1 բաս ուժեղացուցիչ՝ D դաս, հզորություն 45 Վտ<br>1 x RF ուժեղացուցիչ՝ դասի D, հզորությունը 25W | հատ | 2 |
| 5 | **HDMI Splitter 1x4** | Ազդանշանի բաժանում - Distribute HDMI Signal to 4 HDMI Outputs,<br>Supports 3D հետևյալ լուծաչափերի հնարավորությամբ480p 720p 720i and 1080i 1080p resolutions.<br>Սնուցման համակարգ 220Վ հնարավորությամբ | հատ | 4 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **HDMI Splitter 1x8** | Ազդանշանի բաժանում - Distribute HDMI Signal to 8 HDMI Outputs,<br>Supports 3D Maintains 480p 720p 720i and 1080i 1080p resolutions.<br>Սնուցման համակարգ 220Վ հնարվորությամբ | հատ | 4 |
| | High-Speed HDMI Cable with Ethernet (Black, 10 մ) | Միակցիչ 1- HDMI արական<br>Միակցիչ 2 - HDMI արական<br>Մալ ու խի երկարու թյ ու նը 10մ | հատ | 10 |
| | Pearstone High-Speed HDMI Cable with Ethernet (Black, 3') /HDMI մալ ու խ 3ft | Միակցիչ 1- HDMI արական<br>Միակցիչ 2 - HDMI արական<br>Մալ ու խի երկարու թյ ու նը 3 ֆտ/ 0,9 մ<br>Հաղորդալար նյ ու թ, առանց թթվածնի պղինձ (OFC)<br>Ծածկու յ թի տեսակը Պոլ իվինիլ քլ որիդ (PVC)<br>Արտաքին տրամագիծը 0,2 դյ ու յ մ / 6 մմ<br>Պղնձի արտախոսքի պաշտպանու թյ ու ն<br>Ալ յ ու մինե փայ լ աթիթեղ<br>Ալ յ ու մինե հյ ու ս<br>Էլ եկտրական<br>Աջակցեք առավել ագու յ ն լ ու ծաչ ափին 4096 x 2160<br>Թողու նակու թյ ու նը 18 Գբիտ/վրկ<br>Լարաչ ափ30 AWG | հատ | 56 |
| 6 | The SFP-12G-OPT-TR | SFP - 3G/12G SDI Video Optical Transceiver > 20km / համատեղել ի BlackMagic , LYNX, AjA , Համատեղել ի է SD-SDI, HD-SDI, 3G-SDI , 6G-SDI և 12G-SDI<br>Զիթերի բարձրակարգ կառավարու մ և ազդանշանի վերականգնու մ<br>Աջակցու մ է BT.709 և BT.2020 գու նայ ին տարածու թյ ու ններին, որոնք համապատասխանու մ են HDR-ին<br>Աջակցու մ է մինչ և 8 ներկառու ցված առու դիո ալ իք (PC | հատ | 2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7 | Canare L-4.5CHD Video Coaxial Cable (Black) , Մպ ու խների ծպ րերին ւփաք լ ինի Canare 3.0 GHz 75-Ohm BNC Plug for L-4.5CHWS/1694F Cables , Պետք է հետը ներառված լ ինի պփու սսոյ ին հարակցիչ ներ առնվազն 50 հատ | պրտաքին տրամագիծը՝ Nominal: 0.27" / 7 mm<br>Ներքին հաղորդիչ՝ : 0.04" / 1.02 mm<br>Insulation: 0.18" / 4.57 mm<br>Conductor Inner Conductor Composition: 1/1.02A (18) Quantity/mm (AWG)<br>Արտաքին հաղորդիչ ի վահանի ծածկու յ թ և կազմ (91% or More): 0.14TA mm, 6 Ends, 24 Carriers Resistance,<br>Ներքին հաղորդիչ ի դիմադրու թյ ու նը: ≤23.3 Ohms/km<br>Outer Conductor: ≤9.9 Ohms/km<br>Static Capacity 53 nF/km @ 1 kHz<br>Impedance 75 ±3 Ohms<br>Attenuation 17.4 dB/100 m at 750 MHz<br>Maximum Transmission Distance Composite NTSC: 1807.74' / 551 m @ 143 Mb/s (SMPTE 259M)<br>Composite PAL: 1653.54' / 504 m @ 177 Mb/s (ITU-R BT.601)<br>Component (4:2:2): 1361.55' / 415 m @ 270 Mb/s (SMPTE 259M)<br>Component (4:2:2) 16 x 9: 1184.38' / 361 m @ 360 Mb/s (SMPTE 259M)<br>SDI: 961.28' / 293 m @ 540 Mb/s (SMPTE 344M)<br>HD-SDI: 377.29' / 115 m @ 1.5 Gb/s (SMPTE 292M)<br>HD 1080p: 259.18' / 79 m @ 3 Gb/s (SMPTE 424M)<br>+ հարակցիչ Համատեղել իու թյ ու ն L-4.5CHWS/1694F<br>Վերադարձի կորու ստ(0-ից 3 ԳՀց) - 26 դԲ կամ ավել ի մեծ Boot CB05A<br>Ձու գավորու մ թեւ Ցինկ խառնու րդ Die Ձու լ ու մ<br>Կենտրոնական փին ոսկի,<br>Մպ ու խները պետք է լ ինեն հետևյ ալ չ ափերի , 2 հատ100 մ, 6 հատ50մ ,8 հատ30մ, 8 հատ20մ | Մ | 900 |
| | Canare 3.0 GHz 75-Ohm BNC Plug for L-4.5CHWS/1694F Cables | Համատեղել իու թյ ու ն L-4.5CHWS/1694F<br>Վերադարձի կորու ստ(0-ից 3 ԳՀց) - 26 դԲ կամ ավել ի մեծ Boot CB05A<br>Ձու գավորու մ թեւ Ցինկ խառնու րդ Die Ձու լ ու մ<br>Կենտրոնական փին ոսկի, | հատ | 160 |
| | TecNec My Custom Shop 8-Point 12G-SDI Feed-Through BNC Patch Panel (1-RU) | Միակցիչներ 8 x Neutrik NBB75DFGX հիմնավորված 75 Օհմ 4K/8K UHD D-Style շասսիի ամրացման BNC միակցիչ<br>Դիմադրություն Կապ Դիմադրություն<br>Ներքինը՝ ≤3 mOhms<br>Արտաքին՝ ≤ 2 mOhms<br>Մեկուսացում<br>5 գՕմ 1,5 կՎԴC-ում<br>Համապատասխանություն SMPTE ST 2082-1, ST 2081-1, ST424, ST292<br>Չափերը 1 RU | հատ | 4 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Изолирующий трансформатор для 3G/HD/SD-SDI видеосигналов. Компактный корпус. **TR-11HDG** | Մու տքագրու մների քանակը 1<br>Միակցիչ ների տեսակը BNC<br>Մու տքայ ին տիփ տրանսֆորմատր<br>Տեսանյ ու թի ել ք<br>Միակցիչ ների տեսակը BNC<br>Ել քայ ին տիփ տրանսֆորմատր<br>Ազդանշանի անցու մ ստանդարտSMPTE 424M, SMPTE 292M, SMPTE 259M<br>Բարձրացման/անկման ժամանակը, առավել ագու յ նը, (ps) 120<br>Առհմանայ ին լ արու մը հողերի միջև փոփոխական բաղադրիչ ի վրա50 Հց, (V) 250<br>Առհմանայ ին լ արու մը հողերի միջև հաստատու ն բաղադրիչ ի վրա (V) 300<br>Տեղադրման կորու ստ135 ՄՀց հաճախականու թյ ամբ, (դԲ) <0,3<br>Տեղադրման կորու ստ750 ՄՀց հաճախականու թյ ամբ, (դԲ) < 2 | հատ | 10 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ**

Հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0011
ՀՎՀՀ՝ 01540062
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001

**ԿԱՏԱՐՈՂ**
**«Արէներգո» ՍՊԸ**

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք 8 զնգվ. 36, բն. 71
Բանկ՝ ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 220463330401000
ՀՎՀՀ՝ 00890843

*Հավելված N 2*
*« 05 » դեկտեմբերի 2022թ. կնքված*
*ՀՀՀ-ՀՄԱԾՁԲ-22/17-1 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| իրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 92151100/50 | ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 8 390 000 | 8 390 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ**

Հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0011
ՀՎՀՀ՝ 01540062
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001

**ԿԱՏԱՐՈՂ**
**«Արէներգո» ՍՊԸ**

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք 8 զնգվ. 36, բն. 71
Բանկ՝ ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 220463330401000
ՀՎՀՀ՝ 00890843

*Հավելված 3*
*«　　»　　　　20　թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ________________________ | ________________________ |
| ________________________ | ________________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________________ | հհ____________________ |
| հվհհ __________________ | հվհհ__________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«　　» «　　　　» 20　թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
____________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝　_________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «　» «　　　　» 20　թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ________________________ | ________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ________________________ | ________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«      »        20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____________-ի
Պատվիրատուի անունը                                Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20    թ. ______________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                      պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն